

## ՊԱՏՐԻԱՐքԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

**ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՒԳՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ**

**ԶՈՅՎ ՅՈԲԵԼԵԱՆՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ.**

ԵԽՈՒԽՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՑ Տ. ԵՊԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵԽ  
ՃՆՈՐԾԻՒ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱԳԻՈՑՆ ՊՈ.ՏՐԻԱՐՔ Ա.Ռ.Ա.Ք.Ա.Ն  
ՍՈՒՐԲ ՍԹՈՌՈՅԸ ԵՐՈՒՍԱ.Պ.ԷՄԻ, ՎԵՐՈ.ՏԵԽՈՒԶ ՍՈՒՐԲ ԵԽ  
ՏՆՈՐԻՆԱ.Կ.Ա.Ն ՏԵՊԵԱ.ՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ, ՅՈՐՄԷ ՀԱ.Ա.Ց ՃՆՈՐԾՔ  
ԵԽ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՑ ՆՈՐԻՆ ԳԵՐԱՇՆՈՐԾՈՒԹԵԱՆ Տ.  
ԹՈՒԳՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ, Ա.Ռ.Ա.Զ.ՆՈՐԴ ՀԻՒ.  
ՄԻՍԱ.ՑԻ և Ա.ՄԵՐԻԿԱՑԻ Ա.ՐԵԽԵԼԵԱՆ ԹԵՄԻՆ:

«Յիշեա, որդեակ», կը թէլադրեն Ա. Գիրքն ու Աւետարանը,  
վերազարձնելով մեր միտք անցեալին: Մարդկային մտի ամենէն  
սխանչելի իրողութիւններէն մին է յիշողութիւնը, առանց որուն  
մենք զրկուած պիտի ըլլայինք մեր ինքնութիւնը կազմող եւ բիւ-  
րեղացնող տուեալներէն: Մեր տեսածները, յղացներն ու զաղա-  
փարները, մեր միզիբական եւ հոգեկան ապրումներն ու տպաւ-  
րութիւնները կը կազմեն զեղեցիկ շարանը մեր յիշողութեան:

Յիշողութեան այդ նրանքով է որ կը մաքերեմ, սիրելիդ իմ  
Թուղոս Արքեպիսկոպոս Մանուկեան, երեմնի անուշիկ Աւետիսը,  
Պաղտահի աւագներէն ոսկի կտորի մը նման Երուսաղէմի ժառան-  
գաւորաց Վարժարանն ու Ընծայարանը բերուած: Աշխոյժ եւ  
վարվուն, սիրելին ամբողջ դպրոցին, բայց մանաւանդ այդ օրե-  
րու Եղանակայիշատակ եւ մեծանուն Պատրիարքին, որուն անունը  
կը կրես իրաւոնելով եւ փառելով, ու ձեռնադրութենէդ առաջ  
որուուած, յաւէս անմոռաց Պատրիարքի կողմէն, որ առիքը չու-  
նեցաւ իր հոգեւոր զաւակները անձամբ Սուրբ Սեղանին առաջ-  
նորդելու:

Անցնող տարիները այն ատեն միայն բարոյական արժեքի կը  
բարձրանան, երբ մարդկային առաւելութիւններով է որ կը հար-  
տանան, նման արմաւենիին, որ ամէն տարի կը ցուցանեաւ կե-  
ղեւային նոր օղակի մը յաւելու մոլ:

Արժանաւորչանձեռու յոբելեանը երախտագիտութեան եւ մեծարանի պարտք մը չէ միայն իրեններուն կողմէ հատուցուած, այլ նաև արդարութեան իրաւունք մը ընծայելի անո՞ւ որ արիներով զօհարերեց իր կեանքը խօսով, գրչով եւ վարչական իրեն յատոկ եղանակով, ստեղծելով իր ըուրչ եւ Թեմէն ներս բարեխառն մընոյու մը, զերծ ցնցումներէ եւ յանիմաս ցուցաբերումներէ։ Քառասուն տարիներու իր ծառայութիւնը կոչումներու ամենէն ազնուազոյնին, անձնական յօժարութեամբ իր նուիրումը կրական գործին, նախ Երուսաղէմի մէջ, իրեն ուսուցիչ եւ Տեսուչ, ապա տարիներով իրեւ Տիրոջ Տաճր սպասաւոր, որուն վայելցութիւնը սիրեց, իրեւ գրչի մարդ, որ իր նոզիին ծաղիկը դրսեւթեց եւ անոր բոյը բաշխեց սիրերուն։

Հանդիսաւոր զիտակցութեամբ, որուն խորքը նիացումը կը կազմէ, Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան վիճակի Թեմական կուրհուրդը որուած է 1983 տարուան թնրացքին նեկ Թեմակալ Առաջնորդ Գեւասնորի Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի եպիսկոպոսական եւ Միացեալ Նահանգներու Արեւմտեան եւ Արեւելեան Թեմերուն մէջ Առաջնորդութեան 20ամեակները։ Այս որքան Մրանուչ՝ նոյնան արդար հատուցման պարագան, ուրիշներու կարգին առաւելազանց հրետանիով կը լեցնէ նոզիս, իրեւ իր ուսուցիչը եւ գրչի եղբայրը, բայց մանաւանդ լծակիցը Աւետարանի դաւանին մէջ։

Տակաւին Երիտասարդ է մեր սիրելի Յօրելեարը եւ ապահով տարիներ ունի բոլորին ծանօթ իր արժանիներով ծառայելու մեր Եկեղեցին եւ ժողովուրդին, որ այնքան պէտք ունի իրեն նման զիտակից, կարող եւ զօհարելու պատրաս նոզիներու։ Հետեւարար, զօտապինդ եւ ընորհաբաշի, ինչպէս երեկ՝ նոյնպէս եւ յետ այսու, մատուակէ առասօրէն Տիրոջ կողմէ Զեզի ընորհուած ժանհանները, սիրելի Մրազան, որպէսզի կարենան համարձակօրէն ըստ ըստ Աւետարանին։ «Տէր, ահա զմնասի ու տասն մնաս արար»։

**Մրազին մաղթանեներով եւ եղբայրական սիրով**

**ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆ**

**Պատրիարք Հայ Երուսաղէմի**